

կաթողիկոսի կոնդակի այն մասը, որը քաղուածք էր Աղուանից Պատմութիւնից, տեսանք որ Անանիա կաթողիկոսը օգտուել է յիշեալ պատմութեան Առաջին գրքի 9, 11 և 14 թ. գրքի 47 և 48 և Պ. գրքի 3, 4, 5, 6, 7, 8, 9, 21 և 23 գլուխներից: Համեմատելով օգտուած աղբիւրները կոնդակի հասուածների հետ՝ նկատելի եղաւ որ ներկայումս մեր ձեռքը հասած Աղուանից պատմութեան օրինակը Անանիայի ժամանակի 949 թուականի օրինակից շատ չի տարբերուում: այնպէս որ այն ժամանակուայ խմբագրութիւնը համարեա թէ մեծաւ մասամբ հասել է մեզ անփոփոխ: Իսկ այն փոփոխութիւնները, յաւելուածները և տարբերութիւնները, որը նկատելի է երկու խմբերի մէջ, ևս և այն աղբիւրները, որից հիւսել է Աղուանից պատմւել իւր պատմագրութիւնը, կը հրատարակենք առաջիկայ համարում:

յո. Վ.



ՄԱՏԵՆԱԽՈՍԻԹԻՒՆ.

Յովհաննէս Մալխասեան. երդում: վէպ. Թիֆլիս, 1896 թ. գինը 40 կ: Աւելորդ չենք համարում երբեմն երբեմն ասելու և գանդատուելու, որ մեր հասարակութիւնը գիրք չէ կարդում: Հասարակութիւն ասելով մենք հասկանում ենք այս գէպքում այն բոլոր անհատներին, որոնք կարդալ գրել գիտեն: Չի կարդում ոչ միայն ժողովուրդը, զիւղացին կամ արհեստաւորը, այլ և քաղաքացին հարուստը, ինտելլիգէնտը: Այ՛ մեծն է կարդում, ոչ փոքրը, ոչ երիտասարդը և ոչ օրիորդը: Չի սիրում կարդալ հայը ընդհանրապէս՝ իսկ նախ և առաջ նա սէր չունի հայերէն գրքեր կարդալու: Ինչիցն է առաջ դալիս այդ երեւոթը: Պատճառներ շատ կան. զխաւոր պատճառներն են, մեր կարծիքով, նախ որ մենք չենք աշխատում մեր երեխաների սրտերի մէջ փոքրուց սերմանել ընթերցասիրութեան սերմերը. երկրորդը որ մեր «ամենասիրելի» հեղինակների գրուածքները թանգ են և անմատչելի ժողովրդի համար (այսպէս իս. Աբովեանի Բաֆթու, Պաօշեանցի, Ռ. Պատկանեանի, և այլ հեղինակների գրուածքները). վերջապէս մենք իսկապէս ասած լաւ գրքեր էլ չունենք:

Վէպը գրականութեան այն ձևն է, որ ամէնից շատ և սիրով է կարդացուում ամէն տեղ: Բայց եթէ լաւ հետեւէք մեր գրականութեանը, մանաւանդ առանձին գրքերով հրատարակուած գրուածքներին, դուք իսկոյն կը տեսնէք, քանի տոկոս են ներկայացնում մեր վիպական գրուածքները և մանաւանդ ինքնուրոյն վէպերը: Իսկ քանի՞ քանիները այդ վէպերից ու պատկերներից անպէտք գրուածքներ են, որոնց ընթերցումը ժամանակի կորուստ է:



Այնուամենայնիւ ամէն մի նոր վիպական գրուածքի լոյս տեսնելը մեզ ուրախացնում է. մենք ամենայն սիրով սկսում ենք կարդալ այն յուսով, որ գուցէ հեղինակը մի «նոր խօսք» կասէ, մի նոր շրջան կը բանայ մեր գրականութեան մէջ. բայց շատ սակաւ է պատահում, որ մենք յուսախոր չլինինք: Այ՛ ժամ էլ մեր առաջը մի նոր վէպ է գրած, բայց սա աւելի պատկերներ են իրական կեանքից, քան թէ վէպ, որովհետեւ հեղինակը վէպի մէջ վիպական մասը բոլորովին չի մտցրել: Բացի գրանից վէպ, ուսման, ասելով մենք հասկանում ենք այնպիսի մի գեղարուեստական գրուածք, որից մենք ծանօթանում ենք մի կամ մի քանի հերոսների կեանքի բոլոր կողմերի հետ: Այ՛դ կողմից էլ Յ. Մալխասեանի մեր ձեռքին եղած և նոր լոյս տեսած վէպը մեզ չի գոհացնում: Մենք գիտենք միայն, որ Ախալքալաք դաւառի Մարկոս, Սարգիս և Յարութիւն զիւղացիները ու նրանց մօտիկ մարդիկը ի՛նչպէս են միմեանցից վրէժ հանում ինչ միջոցներով են կոռում միմեանց հետ և պաշտպանուում միմեանցից. դուրս մի բան էլ աւելի ենք իմանում: Բայց դա բաւական չէ մեզ համար. մեզ պէտք են նրանց աշխարհայեցողութիւնները, որոնք պակասում են այդ վէպի մէջ:

Վէպի՞ կմախքը սա է. Յարութիւնը ուզում է Մարկոսից վրէժ առնել. Սահակը — սուտ երդում է ուտում ու յետոյ զղջալով ուզում է դնալ ամէն բան յայտնել դատարանում բայց Յարութիւնը, վախենալով, որ իր բոլոր «վատութիւնները» գրանից կարող են բացուիլ խեղդում է Սահակին:

Ղիւղացիների պատկերներ և մի քանի տեսարաններ — շատ յաջող են դուրս բերուած: Երևում է, որ հեղինակը լաւ և ի մօտոյ ծանօթ է առհասարակ զիւղական կեանքին և մասնաւորապէս այդ դաւառի կեանքին, երևում է, որ նա շատ էլ սիրում է այդ կեանքը. դուրս բերուած տիպերը և երեւոթները նրա սրտին շատ մօտ են: Բայց

Հեղինակը չունենալով վիպասանի համար անհրաժեշտ զեղարուեստական չափը—ձանձրացնում է ընթերցողին: Հեղինակը աւելի պատկերահասն է: քան նկարիչ: այդ պատճառով էլ՝ բնութեան նկարագրութիւնները շատ թոյլ են. նա փորձառու հոգեբան էլ չէ: որովհետեւ Յարութիւնի պէս մարդը իւր տանը մարդ չի սպանի: Այդուհանդերձ աւելի զաւառական է: քան զբանական: և զաւառականը աւելի կենդանի է և նկարչական քան զբանականը: որ շինծու: հնարովի ոճեր ունի: Աթէ այդ պէպեր կիսով չափ փոքր լինէր: այսինքն գուրս ձգուէին աւելորդաբանութիւնները և նկարագրութիւնները և դիր պակասէր մինչև 10 կոպէկ—այն ժամանակը այդ դրուածքը աւելի կը զեղեցիկանար և աւելի օգտակար կը լինէր: որովհետեւ իրրեւէժան զիրք աւելի շատ կը տարածուէր զիւղացիների մէջ: Աւ հէնց դրանց համար էլ մեր կարծիքով զրուած է այդ պատկերը: որտեղ տէնդէնցիան: գաղափարը աւելի մեծ դեր է կատարում: քան թէ զեղարուեստական օրնէքները: Հեղինակը ուղղակի իրրեւ հրապարակաբանաց է անում վարագոյրը և ցոյց է տալիս մեզ մեր զիւղերի մութ անկիւնները: իր տեսակի « ВЛАСТЬ ТЬМЫ »: Աւելորդ չէ մեզ էլ ժամանակ առ ժամանակ ծանօթանալ մեր զիւղական կեանքի երևոյթներին: չարն ու բարին: որ հասկանանք այն ճշմարտութիւնը: որ դեռ մթին խաւարի մէջ է մեր ժողովուրդը: որ դեռ կենդանական բնագրութիւնով է զեկավարուում զիւղացին իր առօրեայ կեանքի մէջ: որ մենք որքան էլ ուսում ու լուսաւորութիւն տարածենք այդ մութ անկիւններում: էլի քիչ է: էլի բաւական չէ տիրող խաւարը փարատելու համար:

Ֆիլի:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ:

ԵՐԳԻ ՂԻՃՈՎ ՀՆԳՈՆՆՈՅՑ

Ըստ խնդրանաց Արարատի խմբագրութեան հետեւալ ծանօթութիւններն գրուած են Հեղինակի կարծառե այցելութեան միջոցին ի Ս. Էջմիածին: Երբ նա ստուգագոյն գրաւոր աղբիւրներից հեռու՝ բողոքովին իւր յիշողութեան վտահելու պարտաւորուած էր: Միևնոյն ժամանակ Հնդկահայոց արդի վիճակն այնպիսի բաղմակողմանի հանգամանքներ չունի որ այսպիսի ծանօթութիւններ խմբագրելու գործն առանց գրաւոր աղբիւրների կարի յոյժ գժուարացնէ. մանաւանդ որ երկարամեայ պանդրխտութեամբ ի Հնդկիկ՝ Հեղինակն կարողացել է իւր հայրենակցաց արդի վիճակն այդ հեռուոր երկրում՝ ըստ բաւականին ուսումնասիրել: Այս ծանօթութեանց հետ կը գտնուին նաև Ջաւայի և Բիրմանստանի աղգայնոց արդի վիճակի նկարագրութիւնը: քանզի սոքա ևս նոյն ծագումն ունին: նոյն պարագայից մէջ են ապրում որպէս Հնդկահայք: և շատ բաներում իրարից անանջատ են:

1. Ամբողջ Հնդկաստանի, Բիրմանստանի և Ջաւայի Հայոց թիւն չի կարող աւելի քան երեք հարիւր ընտանիք լինել: Բաժանումն մտաւորապէս այսպէս կը լինի. —

Պալկաթա	(Հնդկաստան)	100 տուն.
Մադրաս	« »	25 »
Բուժբայի	« »	5 »
Դաքա	« »	20 »
Ռանդուն Պինանդ և Մանդլէ (Բիրմ.)		100 »
Սինգապուռ Բաթալիա)	Ջաւա	50 »
Սուրբայիա և կղզիք)		
Համագումար		300 տուն.

2. ԵՎԵՂԵՑԻԷ. — Եւրոպացւոց ի Հնդկիկս մուտք գործելուց շատ յառաջ անհատ պարսկահայ վաճառականք և արուեստաւորք Բէլուչիստանի և Աւղանիստանի ծանապարհաւն Հնդկաստան կայցելէին և ոմանք իսկ Հնդկական և Մոզոլ արքունեաց մէջ ծանօթ էին իւրեանց առևտրական և արուեստագիտական հմտութեամբն: Սակայն զաղթականութիւն ու ժողովուրդ հաստատելն և ընդ նմին եկեղեցիք ու քահանայ ունենալն ոչ աւելի քան հա-